



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, 0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19, հեռ.՝ (+374 11) 51 33 50, էլ. փոստ՝ artak.manukyan@parliament.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. օրենքների նախագծերը,
2. օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը,
3. գործող օրենքների փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցող՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝

ԱՐՏԱԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի «Ժբ» կետից հետո լրացնել նոր «Ժգ» կետ հետևյալ բովանդակությամբ.

«Ժգ) հատուկ սակագնային քաղաքականության կիրառում արևային կայանների շինարարության համար, մասնավորապես. խախտված (աղտոտված, աղուտավորված, արդյունաբերական թափոնակույտերով, պոչամբարներով ծածկված) հողերի վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության 14 դեկտեմբերի 2017 թվականի N 1643-Ն որոշմամբ տրված խախտված հողերի դասակարգումների, լքված արդյունաբերական հարթակներում, ինչպես նաև ջրամբարների մակերևույթին և գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի կամ շրջանային միջին մակարդակը չգերազանցող կադաստրային գնահատմամբ գյուղատնտեսական ցածրորակ հողատեսքերի վրա (Հողերի պիտանիությունը գյուղատնտեսության կարիքների համար սահմանվում է հողային կադաստրի միջոցով):»:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ և ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»

Գ Լ ՈՒ Խ 2.

**ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

Հոդված 6. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը

1. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը պետության կողմից վարվող քաղաքականության մշակումն ու իրականացումն է հետևյալ ուղղություններով՝

ա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը.

բ) էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.

գ) Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման պետական ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը.

դ) սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

ե) էներգախնայողության և էներգաարդյունավետության ստանդարտացման փաստաթղթերի մշակումը և ներդնումը.

զ) էներգատեղակայանքների համապատասխանության կամավոր հավաստման համակարգի ապահովումը.

է) էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ գործող և կառուցվելիք օբյեկտների նախագծերի էներգետիկ փորձաքննությունների իրականացման համակարգի ստեղծումը.

ը) էներգետիկ փորձաքննության գործունեության բնագավառի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

թ) էներգակիրների հաշվառման և վիճակագրության ապահովումը.

ժ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման նախագծերի և ծրագրերի ֆինանսավորմանն աջակցումը.

ժա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակով ուսուցման կազմակերպումը, գիտատեխնիկական առաջընթացին, տեղեկատվությանը և քարոզչությանն աջակցումը.

ժբ) էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

ժգ) խառուկ սակագնային քաղաքականության կիրառում արևային կայանների շինարարության համար, մասնավորապես, խախտված (աղտոտված, աղուտավորված, արդյունաբերական թափոնակույտերով, պոչամբարներով ծածկված) հողերի վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության 14 դեկտեմբերի 2017 թվականի N 1643-Ն որոշմամբ տրված խախտված հողերի դասակարգումների, լքված արդյունաբերական հարթակներում, ինչպես նաև ջրամբարների մակերևույթին և գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի կամ շրջանային միջին մակարդակը չգերազանցող կադաստրային գնահատմամբ գյուղատնտեսական ցածրորակ հողատեսքերի վրա (Հողերի պիտանիությունը գյուղատնտեսության կարիքների համար սահմանվում է հողային կադաստրի միջոցով):»:

Formatted: Normal, Justified, Line spacing: Multiple 1.15 li, No bullets or numbering

Formatted: Font: 11 pt

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Մ/թ հունվարի 14-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված Էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարությունը մինչև 2040թ. նախատեսվում է ՀՀ տարածքում արևային էլեկտրակայանների կառուցում՝ դրանց տեղակայված հզորությունը հասցնելով մինչև 1000 ՄՎտ: Ներկայիս արևային տեխնոլոգիաների պարագայում այս ծավալի հզորությունների կառուցման համար գյուղատնտեսական հողերից դեպի էներգետիկ նշանակության կփոխակերպվի առնվազն 1500-2000 հա վարելահողեր և արոտավայրեր: Ավելին, հետզհետե անցումը երկերես (bifacial) և հետևող (tracking) տեխնոլոգիաների կիրառությանը կրկնակի ավելացնում է տեղակայված հզորության միավորի համար անհրաժեշտ հրապարակի մակերեսը՝ հասցնելով 1000 ՄՎտ ակնկալվող հզորության հողի պահանջարկը շուրջ 4000 հեկտարի, կամ հանրապետության վարելահողերի շուրջ 1%-ի չափով:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը արևային կայանները որոշակի բացասական ազդեցություն են ունենում հողերի բերրիության վրա:¹ Ըստ այդմ, մեր կարծիքով անհրաժեշտ է կանխատեսել և կանխարգելել արևային էներգետիկայի զարգացման հետ կապված պոտենցիալ բնապահպանական վտանգները՝ ուղղորդելով դրանց կառուցումը ՀՀ պարենային անվտանգության հեռանկարներին համահունչ հունով: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում հողի վրա վրա տեղակայված կայանները կառուցել բացառապես ցածր կարգի հողերի վրա, իսկ առավել ցանկալի՝ շենքերի տանիքներին, համակցել ագրոկուլտուրաների կուլտիվացիայի հետ համակցված արևային կայանները:

Հենվելով Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 2-րդ մասի «գ» ենթակետի «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները ներառում են «գ) Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված միջոցառումներում բնական ռեսուրսների արդյունավետ (խնայողաբար) օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության խնդիրների գերակայության ապահովումը.», հաշվի առնելով հատկապես 2020թ. պատերազմի արդյունքում արցախյան վարելահողերը և արոտավայրերի կորստից բխող պոտենցիալ պարենային անվտանգության խնդիրները, անհրաժեշտություն է առաջացել վերաթիրախավորել

¹ Մասնավորապես՝ հողի աղտոտում ծանր մետաղներով, դեռևս մասնակի են ուսումնասիրված ազդեցությունը հողի բերրիության վրա, հետագայում դրանց դեպի գյուղատնտեսական հողեր վերադարձի իրատեսականության տեսանկյունից, իսկ արդեն ապացուցված է արևային կայանների տակ գտնվող հողից ջերմոցային գազերի արտանետման ինտենսիվացման գործոնը, որը ինքնին հակասում է արևային կայանների կառուցման հիմնական նպատակներից մեկին՝ կլիմայի փոփոխության մեղմմանը:

վերականգնվող էներգետիկայի ոլորտում օգտագործվող մեծամասամբ գյուղատնտեսական նշանակության հողերը:

Ըստ այդմ նախագծով առաջարկվում է «Գ Լ ՈՒ Խ 2. ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ», Հոդված 6-ում «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը» ավելացնել հատուկ սակագնային քաղաքականության կիրառում արևային կայանների շինարարության համար, մասնավորապես.

- Խախտված (աղտոտված, աղուտավորված, արդյունաբերական թափոնակույտերով, պոչամբարներով ծածկված) հողերի վրա, և այլն ` համաձայն ՀՀ Կառավարության 14 դեկտեմբերի 2017 թվականի N 1643-Ն որոշմամբ տրված խախտված հողերի դասակարգումների:
- Լքված արդյունաբերական հարթակներում
- Ջրամբարների մակերևույթին
- գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողեր կամ շրջանային միջին մակարդակը չգերազանցող կադաստրային գնահատմամբ գյուղատնտեսական ցածրորակ հողատեսքերի վրա (Հողերի պիտանիությունը գյուղատնտեսության կարիքների համար սահմանվում է հողային կադաստրի միջոցով):

Այսինքն, ՀԾԿՀ կողմից արևային էլեկտրակայանների համար սահմանվող էլեկտրաէներգիայի վաճառքի սակագինը տարբերակված լինի` ըստ կայանի համար ընտրված հողատարածքի: Այս առաջարկը հնարավորություն կտա ապահովելով ավելի բարձր շահութաբերություն և ուղղորդել կայանների կառուցումը ցածրակարգ, խախտված հողերի, ջրամբարների, պոչամբարների վրա, կամ դեպքի համակցված ագրո-արևային համակարգերը: Հարկ է նշել, որ մեր առաջարկը հնարավորություն կտա նպաստել հողերի տնտեսական շրջանառության արդյունավետության բարձրացմանը` խթանիչ կառուցակարգերի կիրառության միջոցով: